

ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*ՄՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
2021Թ. ՀՈՒՆՎԱՐ-ՕԳՈՍՏՈՍԻՆ*




**Սպառողական գների փոփոխությունները Հայաստանի Հանրապետությունում
2021թ. հունվար-օգոստոսին՝**

Հայաստանի Հանրապետության սպառողական շուկայում 12-ամսյա գնաճը (2021թ. օգոստոսը 2020թ. օգոստոսի նկատմամբ) կազմել է 8.8%, իսկ նախորդ ամսվա նկատմամբ՝ 0.4%:

Անհատական սպառում՝ ըստ նպատակների դասակարգիչ (ԱՄԸՆԳ) երկու նիշ մակարդակ	2021թ.			
	օգոստոսը		հունվար-օգոստոսը 2020թ. հունվար-օգոստոսի նկատմամբ, %	օգոստոսը 2020թ. դեկտեմբերի նկատմամբ
	2020թ. օգոստոսի նկատմամբ, %	2021թ. հուլիսի նկատմամբ, %		
00 Սպառողական գների ինդեքս-ընդամենը այդ թվում՝	8.8	0.4	6.4	103.7
01 սննդամթերք և ոչ ակոհոլային խմիչք	15.1	0.6	9.3	104.5
02 ակոհոլային խմիչք, ծխախոտային արտադրատեսակներ	9.3	0.1	9.2	108.4
03 հագուստ և կոշիկ	10.3	0.2	6.0	103.5
04 բնակարանային ծառայություններ, ջուր, էլեկտրական էներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ	1.4	0.4	1.1	100.7
05 տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանների խնամքի ամենօրյա գործունեություն	9.5	0.1	8.6	106.8
06 առողջապահություն	5.3	-0.2	6.0	103.6
07 տրանսպորտ	10.0	0.5	9.7	104.7
08 կապ	0.9	-0.1	0.9	100.8
09 հանգիստ և մշակույթ	1.8	1.2	1.5	106.4
10 կրթություն	2.1	0.0	2.1	100.0
11 ռեստորաններ և հյուրանոցներ	2.6	0.5	2.8	104.4
12 տարբեր ապրանքներ և ծառայություններ	4.3	0.4	4.5	102.8

Սպառողական գների փոփոխությունները 2021թ. օգոստոսին 2015թ. նկատմամբ **




* Սույն հաղորդագրությունում հիմնականում տրված է Հայաստանի Հանրապետությունում 2021թ. օգոստոսի գնային փոփոխությունների հակիրճ մեկնաբանությունը: Սպառողական գների ինդեքսների ավելի ընդարձակ տեղեկատվությունը գեներվում է «Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում» ամսական տեղեկագրում (տեղեկագրի ծածկագիրը՝ 1300-305):

** Եվրոստատի կողմից սահմանված ինդեքսի հիման ժամանակաշրջան:


Ենթաինդեքսների փոփոխությունների ազդեցությունը սպառողական գների ինդեքսի ընդհանուր ցուցանիշի վրա 2021թ. օգոստոսին (նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ)

%



Ենթաինդեքսների փոփոխությունների ազդեցությունը սպառողական գների ինդեքսի ընդհանուր ցուցանիշի վրա 2021թ. օգոստոսին (նախորդ ամսվա նկատմամբ)

%




Սպառողական գների փոփոխություններն ըստ սպառման հիմնական խմբերի

	2021թ.			
	օգոստոսը		հունվար-օգոստոսը 2020թ. հունվար-օգոստոսի նկատմամբ,%	օգոստոսը 2020թ. դեկտեմբերի նկատմամբ
	2020թ. օգոստոսի նկատմամբ,%	2021թ. հուլիսի նկատմամբ,%		
Սպառման ապրանքներ	12.8	0.5	8.9	105.0
<i>այդ թվում՝</i>				
աննդամերք, խմիչք և ծխախոտ	14.5	0.5	9.3	104.9
ոչ պարենային ապրանքներ	9.4	0.4	8.3	105.2
Ծառայություններ	1.8	0.1	1.9	101.2

Սպառողական գների հավելվածը 2012-2021թթ. օգոստոսին

նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %



2021թ. հունվար-օգոստոսին սպառողական գների միջին ամսական հավելվածը կազմել է 0.4% (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրվել է 0.2% նվազում):


Հանրապետության դիտարկվող բոլոր քաղաքներում 2021թ. օգոստոսին հուլիսի համեմատ սպառողական գներն աճել են 0.2-0.6%-ով, այդ թվում, գնաճի համեմատաբար բարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Արտաշատում: Մայրաքաղաքում սպառողական գներն աճել են 0.4%-ով:

Սննդամթերքի գներ: 2021թ. օգոստոսին 2020թ. օգոստոսի համեմատ հանրապետությունում արձանագրվել է սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքի 15.1%, իսկ 2021թ. հուլիսի համեմատ՝ 0.6% գնաճ: Վերջինիս մեծապես նպաստել են մսի, ձկան և ծովամթերքի, բանջարեղենի ապրանքախմբերում գրանցված 0.7-5.1% գնաճերը:

Բանջարեղենի ապրանքախմբում¹ 2021թ. օգոստոսին 2020թ. օգոստոսի համեմատ արձանագրվել է 66.4%, իսկ 2021թ. հուլիսի համեմատ՝ 5.1% գնաճ:

Բանջարեղենի գների փոփոխությունները 2019-2021թթ. հունվար-օգոստոսին

նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ, %



¹ 2021թ. հուլիս-օգոստոսին 2020թ. հուլիս և օգոստոս ամիսների նկատմամբ բանջարեղենի և մրգի առանձին տեսակների գների ինդեքսների մասին տեղեկատվությունը բերված է հավելված 1-ում:

Ձկան և ծովամթերքի ապրանքախմբում 2021թ. օգոստոսին 2020թ. օգոստոսի համեմատ արձանագրվել է 25.5%, իսկ 2021թ. հուլիսի համեմատ՝ 1.5% գնաճ (<<Իշխան>> ձկնատեսակի գնաճը 2021թ. օգոստոսին 2020թ. օգոստոսի համեմատ կազմել է 29.3%, իսկ 2021թ. հուլիսի համեմատ՝ 1.7%):

2021թ. օգոստոսին 2020թ. օգոստոսի համեմատ մսամթերքի ապրանքախմբում գրանցվել է 9.9%, իսկ 2021թ. հուլիսի համեմատ՝ 0.7% գնաճ (խոզի մսի գնաճը 2021թ. օգոստոսին 2020թ. օգոստոսի համեմատ կազմել է 40.3%, իսկ 2021թ. հուլիսի համեմատ՝ 6.5%):


Կաթնամթերք, պանիր և ձու ապրանքախմբում 2021թ. օգոստոսին 2020թ. օգոստոսի համեմատ գրանցվել է 12.2%, իսկ 2021թ. հուլիսի համեմատ՝ 0.4% գնաճ: Չվի զինը 2021թ. օգոստոսին 2020թ. օգոստոսի համեմատ աճել է 46.5%-ով, իսկ 2021թ. հուլիսի համեմատ գրանցվել է 1.2% գնանկում:

2021թ. օգոստոսին հուլիսի համեմատ հանրապետությունում արձանագրվել է սուրճի, թեյի, կակաոյի՝ 0.2%, հացաբուլկեղենի և ձավարեղենի, ոչ ալկոհոլային խմիչքի 0.3% գնաճ:

Ալկոհոլային խմիչքի և ծխախոտային արտադրատեսակների ապրանքախմբում 2021թ. օգոստոսին 2020թ. օգոստոսի համեմատ արձանագրվել է 9.3%, իսկ 2021թ. հուլիսի համեմատ՝ 0.1% գնաճ: Ալկոհոլային խմիչքի գնաճը 2021թ. օգոստոսին 2020թ. օգոստոսի համեմատ կազմել է 8.7%, 2021թ. հուլիսի համեմատ՝ 0.2%, իսկ ծխախոտային արտադրատեսակներին՝ համապատասխանաբար 10.4% և 0.1%:

Սրգի ապրանքախմբում՝ 2021թ. օգոստոսին 2020թ. օգոստոսի համեմատ արձանագրվել է 8.7%, իսկ 2021թ. հուլիսի համեմատ՝ 1.5% գնանկում:

Սրգի գների փոփոխությունները 2019-2021թթ. հունվար-օգոստոսին
նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ, %



Յուղերի և ճարպերի ապրանքախմբում 2021թ. օգոստոսին 2020թ. օգոստոսի համեմատ արձանագրվել է 29.1% գնաճ, իսկ 2021թ. հուլիսի համեմատ՝ 3.5% գնանկում (արևածաղկի բուսական յուղի գնաճը 2021թ. օգոստոսին 2020թ. օգոստոսի համեմատ կազմել է 61.9%, իսկ 2021թ. հուլիսի համեմատ գրանցվել է 8.4% գնանկում):

Շաքարի և շաքարավազի ապրանքախմբում 2021թ. օգոստոսին 2020թ. օգոստոսի համեմատ գրանցվել է 36.2% գնաճ, իսկ 2021թ. հուլիսի համեմատ՝ 1.5% գնանկում:

Ոչ պարենային ապրանքների գներ: 2021թ. օգոստոսին 2020թ. օգոստոսի համեմատ ոչ պարենային ապրանքների շուկայում գրանցվել է 9.4%, իսկ 2021թ. հուլիսի համեմատ՝ 0.4% գնաճ:


2021թ. օգոստոսին հուլիսի համեմատ հանրապետությունում արձանագրվել է կահույքի և կահավորանքի՝ 0.1%, գորգերի և հատակի ծածկերի՝ 0.2%, հագուստի՝ 0.4%, ապակե ամանեղենի, ճաշասպասքի և տնային կահ-կարասու, կենցաղային և այգեգործական գործիքների, վառելանյութերի և քսանյութերի՝ 0.5%, խոշոր կենցաղային սարքերի՝ 0.7%, բնակարանի նորոգման և սպասարկման նյութերի՝ 0.8%, գրասենյակային պարագաների 3.5% գնաճ:

Միաժամանակ, ոսկերչական զարդերի գները նվազել են 0.4-ով, դեղագործական ապրանքներինը՝ 0.2%-ով, մաքրող, լվացող միջոցներինը՝ 0.1%-ով, իսկ տարբեր տեսակի կոշիկներին և կենցաղային փոքր էլեկտրական սարքերի ապրանքախմբերում գների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

2021թ. օգոստոսին հուլիսի համեմատ բենզինի և դիզելային վառելիքի գներն աճել են 2.2% և 1.6%-ով: 2021թ. օգոստոսին 2020թ. օգոստոսի համեմատ հանրապետությունում գրանցվել է բենզինի և դիզելային վառելիքի՝ համապատասխանաբար 47.5% և 44.3%, իսկ 2020թ. դեկտեմբերի համեմատ՝ 35.1% և 41.7% գնաճ:

Բենզինի և դիզելային վառելիքի միջին ամսական գների փոփոխությունները 2018-2021թթ.

2015թ. նկատմամբ




Ծառայությունների սակագներ: Մատուցված ծառայությունների ոլորտում 2021թ. օգոստոսին 2020թ. օգոստոսի համեմատ արձանագրվել է սակագների 1.8%, իսկ 2021թ. հուլիսի համեմատ՝ 0.1% հավելաճ:

2021թ. օգոստոսին հուլիսի համեմատ հանրապետությունում գրանցվել է վարսավիրանոցների և անձնական սպասարկման սրահների ծառայությունների սակագների՝ 0.1%, տրանսպորտային ծառայությունների՝ 0.3% (պայմանավորված օդային տրանսպորտով միջազգային չվերթների ծառայությունների սակագների 0.4% հավելաճով), սպասարկման ծառայությունների՝ 0.7%, հանգստի կազմակերպման ծառայությունների սակագների 2.5% հավելաճ: Դրան զուգընթաց, բժշկական ծառայությունների սակագների մակարդակը նվազել է 0.2%-ով, հյուրանոցային ծառայություններինը՝ 0.4%-ով, իսկ բնակարանի նորոգման և սպասարկման, կենցաղային սարքերի նորոգման, կապի, կրթության, հանգստի և մշակութային միջոցառումների հետ կապված ծառայությունների սակագների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

Արտաբժույթի շուկա: 2021թ. օգոստոսին հուլիսի համեմատ սպառողական և արտաբժույթի շուկաներում արձանագրվել է գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի՝ համապատասխանաբար 0.4% և 0.2% հավելաճ (ԱՄՆ դոլարն արժևորվել է): 2021թ. օգոստոսին 2020թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցված սպառողական գների 3.7% գնաճն ուղեկցվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 5.2% նվազումով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցվել է սպառողական գների 1.2% նվազում և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 1.5% հավելաճ: 2021թ. օգոստոսին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 491.7 դրամ, ինչը 1.3%-ով բարձր է 2020թ. օգոստոսի համապատասխան ցուցանիշից (485.5 դրամ):

ՀՀ սպառողական գների ինդեքսի, ԱՄՆ դոլարի, եվրոյի և ՌԴ ռուբլու նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքների փոփոխությունները
 նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ



Մրգի և բանջարեղենի առանձին տեսակների սպառողական գների
տոկոսային փոփոխությունները ՀՀ-ում

	2021թ.			
	հուլիսը		օգոստոսը	
	2021թ. հունիսի նկատմամբ	2020թ. հուլիսի նկատմամբ	2021թ. հուլիսի նկատմամբ	2020թ. օգոստոսի նկատմամբ
Խնձոր	-15.3	-41.2	-8.0	-37.5
Տանձ	-27.2	-0.4	-17.4	-4.1
Ծիրան	-29.0	-1.1	40.4	-13.0
Դեղձ	-43.0	-14.6	-24.7	-17.2
Աղամաթուզ (բանան)	-11.4	12.7	-6.3	8.0
Նարինջ	3.7	10.9	18.3	-3.2
Կիտրոն	2.7	-1.6	2.5	2.1
Ձմերուկ	-46.0	-3.2	-25.7	-18.1
Ելակ	3.8	3.9	2.6	-6.5
Կաղամբ	22.8	236.3	10.4	115.3
Կանաչ սոխ	34.5	103.6	3.0	98.5
Խառը կանաչեղեն	-2.9	25.4	-4.5	23.0
Լոլիկ	-47.4	-35.7	-0.5	4.9
Վարունգ	80.7	104.5	1.4	72.5
Սմբուկ	-69.6	-14.4	-34.1	12.8
Պղպեղ	-36.7	4.7	-18.2	10.8
Կանաչ լոբի	-23.7	11.6	-15.7	14.5
Գազար	-7.6	180.9	3.9	148.5
Ճակնդեղ	-22.1	142.7	-9.1	121.6
Գլուխ սոխ	-12.8	39.1	9.6	58.3
Սխտոր	4.3	17.1	-2.8	31.6
Սունկ	6.3	33.1	7.7	42.8
Կարտոֆիլ	8.9	38.4	12.9	58.0

Սպառողական գների ինդեքսը Եվրամիության, ԱՊՀ և աշխարհի մի շարք այլ երկրներում

	2020թ. դեկտեմբերը 2019թ. դեկտեմբերի նկատմամբ	2021թ.							
		հուն- վարը	փետր- վարը	մարտը	ապրիլը	մայիսը	հունիսը	հուլիսը	հուլիսը 2020թ. դեկտեմբերի նկատմամբ
		նախորդ ամսվա նկատմամբ							
Եվրասիական տնտեսական միություն (ԵԱՏՄ)	105.4	100.7	100.8	100.7	100.6	100.7	100.8	100.3	104.7
Հայաստան	103.7	102.2	100.6	101.0	101.3	99.6	99.2	99.5	103.3
Ռուսաստան	104.9	100.7	100.8	100.7	100.6	100.7	100.7	100.3	104.5
Բելառուս	107.4	101.1	101.9	100.7	100.7	100.6	100.7	100.1	105.9
Ղազախստան	107.5	100.6	100.7	100.6	100.9	100.7	101.1	100.7	105.3
Ղրղզստան	109.7	101.0	101.1	101.1	100.9	100.8	102.3	99.8	107.0
Ընդամենը Եվրամիության երկրներ (ԵՄ-27) ¹	100.2	100.3	100.3	100.9	100.6	100.3	100.2	100.0	102.6
Ավստրիա	101.0	99.3	100.3	101.2	100.1	100.2	100.2	99.9	101.2
Բելգիա	100.4	99.1	101.2	100.9	100.2	100.3	100.4	99.5	101.7
Բուլղարիա	100.0	100.2	100.5	100.2	100.7	100.1	100.0	100.7	102.4
Հունգարիա	102.8	100.9	100.7	100.8	100.8	100.6	100.4	100.6	104.8
Գերմանիա	99.3	101.4	100.6	100.5	100.5	100.3	100.4	100.5	104.2
Հունաստան	97.6	98.7	100.2	101.0	100.9	99.7	101.2	98.7	100.3
Դանիա	100.4	100.2	100.5	100.1	100.5	100.3	100.1	100.8	102.4
Իռլանդիա	99.0	100.2	100.3	100.9	100.6	100.2	100.1	100.4	102.7
Իսպանիա	99.4	99.6	99.4	101.9	101.1	100.5	100.5	98.8	101.8
Իտալիա	99.7	99.1	99.8	101.8	100.9	99.9	100.2	99.0	100.6
Կիպրոս	99.2	99.2	100.1	101.4	100.8	100.4	101.0	100.2	103.2
Լատվիա	99.5	100.4	100.4	100.8	100.9	100.6	100.3	100.4	103.8
Լիտվա	99.9	100.5	100.3	101.0	101.0	100.5	100.5	100.5	104.3
Լյուքսեմբուրգ	99.7	100.9	99.4	101.8	100.0	100.4	100.3	99.6	102.4
Մալթա	100.2	98.7	100.5	101.0	102.9	101.3	101.4	100.2	106.1
Նիդերլանդներ	100.9	99.3	101.2	100.3	100.8	100.1	100.1	100.6	102.6
Լեհաստան	103.4	100.9	100.5	100.9	100.7	100.4	100.1	100.4	104.0
Պորտուգալիա	99.7	99.7	99.5	101.5	100.5	100.3	100.2	99.6	101.4
Ռումինիա	101.8	100.9	100.4	100.4	100.4	100.6	100.2	100.5	103.4
Սլովակիա	101.6	100.3	100.3	100.6	100.2	100.6	100.4	100.5	102.8
Սլովենիա	98.8	99.7	100.2	100.6	100.8	100.7	100.4	100.1	102.5
Ֆինլանդիա	100.2	100.4	100.3	100.3	100.4	100.0	99.9	100.2	101.6
Ֆրանսիա	100.0	100.3	100.0	100.7	100.2	100.3	100.2	100.1	101.8
Խորվաթիա	99.7	100.1	100.2	101.0	100.5	100.1	100.4	100.9	103.2
Չեխիա	102.4	101.3	100.2	100.2	100.6	100.1	100.4	100.7	103.5
Շվեդիա	100.6	99.9	100.3	100.1	100.3	100.2	100.1	100.3	101.3
Էստոնիա	99.1	100.5	100.9	99.7	100.4	101.0	101.2	101.2	105.0
Այլ երկրներ									
Կանադա	100.7	100.6	100.5	100.5	100.5	100.5	100.3	100.6	...
Նորվեգիա	101.4	101.1	100.8	99.7	100.3	99.8	100.4	101.0	103.3
Միացյալ Թագավորություն	...	99.8	100.1	100.3	100.6	100.6	100.5	99.7	...
ԱՄՆ	101.4	100.5	100.7	100.9	101.0	101.0	101.1	100.5	105.9
Թուրքիա	114.6	101.7	100.9	101.1	101.7	100.9	101.9	101.8	110.4
Ուկրաինա	105.0	101.3	101	101.7	100.7	101.3	100.2	100.1	106.5
Մոլդովա	100.4	100.5	100.4	101.0	101.5	100.5	100.1	100.1	104.0
Վրաստան	102.4	101.1	101.1	104.2	100.9	100.7	100.7	101.3	110.4
Շվեյցարիա	99.0	100.0	100.1	100.2	100.3	100.2	100.0	100.1	100.9
Ճապոնիա	98.8	100.5	100.0	100.2	99.6	100.3	100.2	99.7	...

... - Տվյալները բացակայում են:

¹ Եվրամիության երկրների համար ներկայացված են միասնական մեթոդաբանությամբ հաշվարկված և Եվրոպական վիճակագրական համակարգի ստանդարտներին համապատասխան հարմոնիզացված սպառողական գների ինդեքսներ:

«Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2021թ. հունվար-սեպտեմբերին» մամուլի հաղորդագրության հրապարակման ժամկետը, համաձայն «2021 թվականի վիճակագրական ծրագրի», նախատեսված է 2021թ. հոկտեմբերի ամսվա 3-րդ աշխատանքային օրը (տես՝ ծածկագիր 1300-305, Մաս 3, էջ 131):